ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-536-23.03.2023-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-դ կետով լրացվող 2.1-ին մասի՝ 1. «մինչեւ 30 օրացուցային օր ժամկետով» բառերը հանել, 2. «վարժական հավաքների ներգրավելիս» բառերից հետո լրացնել «պետական կամ տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային կազմակերպություն կամ հիմնարկ չհանդիսացող» բառերը, 3. «գործատուի կողմից» բառերից հետո՝ «առաջին 30 օրացուցային օրերի ընթացքում շարունակում է վճարվել» բառերը, 4 «շարունակում է վճարվել» բառերը հանել, 5. «վարժական հավաքներին մասնակցելու» բառերից առաջ լրացնել «այդ ընթացքում» բառերը, 6. «ժամկետով վարժական հավաքների ներգրավելու դեպքում» բառերը փոխարինել «ժամանակահատվածի համար» բառերով, 7. լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Աշխատողին վարժական հավաքների ներգրավելիս պետական կամ տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային կազմակերպություն կամ հիմնարկ հանդիսացող գործատուի կողմից յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար շարունակում է	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			վճարվել աշխատողի հիմնական աշխատավարձի (գործավարձով վարձատրվող աշխատողների դեպքում միջին աշխատավարձի՝ բացառությամբ պարգևատրման գումարների) և վարժական հավաքներին մասնակցելու օրերի համար աշխատողին որպես զինծառայող հաշվարկված դրամական ապահովության դրական տարբերությունը:»: Փոփոխությունները կատարվել են հաշվի առնելով, որ կարգավորման մեջ կիրառվում է «առնվազն» եզրույթը, ինչը ենթադրում է, որ տարբեր մարմիններ կարող են տարբեր չափով պահպանել աշխատավարձը՝ պետական համակարգում միասնական կարգավորումներ նախատեսելու համատեքստում առաջարկվել է պետական հատվածի աշխատողների համար նախագծով կարգավորումներ նախատեսել: Սույն փոփոխությամբ կկարգավորվի նաև աշխատողին 30 օրից ավելի վարժական հավաքների ներգարվելու դեպքում վարձատրության հարցը, քանի որ ստացվում է, որ աշխատողին 30 օրից ավելի վարժական հավաքի ներգարվելու դեպքում, նույնիսկ առաջին 30 օրվա համար գործատուն վճարելու պարտավորություն չունի և ընտանիքի ֆինանսական կայունությունը դրվում էր անորոշության մեջ ու սոցիալական խնդիրների ստեղծման համար բարենպաստ հարթակ դառնում:		
2.	Կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մասում	1. «հրապարակման օրվան» բառերը փոխարինել «հրապարակմանը» բառով, 2. «տասներորդ օրը» բառերը փոխարինել «օրվանից» բառով: Հաշվի առնելով, որ Կառավարության որոշմամբ նախագծի ընդունումը համարվել է անհետաձգելի, առաջարկվում է նաև անցումային դրույթներում փոփոխություն կատարել և սահմանել, որ «օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**